

Հաստատում եմ Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի



գիտության գծով պրոռեկտոր Պ. Ավետիսյան

«14» սեպտեմբերի 2022 թ.

Առաջատար կազմակերպություն Հայ-Ռուսական համալսարան

ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.04 «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Ժաննա Հարությունի Հարությունյանի «Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան նախկին գաղութներում 1961–1991թթ.» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հաստատված է Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի 2022թ. սեպտեմբերի 14-ի նիստում: Նիստին մասնակցում էին ք.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Յ. Մարուքյանը, պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Մելիքյանը, պ.գ.թ., դոցենտ Գ.Գ.Գևորգյանը, ք.գ.թ., դոցենտ Ն.Վ.Գևորգյանը, ք.գ.թ. Վ.Կ.Աղասարյանը:

Երկրորդ աշխարհամարտից հետո և մասնավորապես գաղութային համակարգի փլուզման արդյունքում նախկին գաղութատեր երկները հայտնվեցին խնդրահարույց վիճակում: Բացի նրանից, որ ազգային-ազատագրական շարժումները դարձել էին շատ ավելի դժվար վերահսկելի միջազգային հարաբերությունների երկբևեռ համակարգի երկու կենտրոններն իրենք էին ձգտում զբաղեցնել այլևս նախկին գաղութատեր պետությունների տեղը:

Ֆրանսիան, որը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին ուներ բավականին մեծածավալ գաղութներ,

պատերազմի ավարտից հետո պետք է ըստ էության զիջեր այդ գաղութները ավելի ուժեղ մրցակիցներին: Հարկ է նշել, որ ի տարբերություն Մեծ Բրիտանիայի, որը հետպատերազմական աշխարհակարգի վրա ուներ որոշակի ազդեցություն, Ֆրանսիան ավելի անկարող վիճակում էր: Վերջինիս բանակը ջախջախվեց դեռ 1940 թ., նավատորմը ջրասուեզ էր արվել, իսկ բուն երկիրը շուրջ 4 տարի մնաց գերմանական բռնազավթման ներքո: Ֆրանսիան չկարողացավ ստեղծել նաև բրիտանականի նմանակով ֆրանսիական ազգերի այսպես կոչված մեծ համայնք. ներքին անկայությունը, բարդ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ, գործնականում զրկում էին Ֆրանսիան երկարաժամկետ ապագայում պահպանել իր գաղութային տիրույթները: Արդեն 20-րդ դարի 60-ականներին Ֆրանսիան ստիպված էր հեռանալ Հնդկաչինից և Ալժիրից, որով ըստ էության փակվում էր ֆրանսիական գաղութային կայսրության պատմության էջը: Սակայն ինչպես Անգլիան, այնպես էլ Ֆրանսիան ճանապարհներ էր փնտրում պահպանել իր երբեմնի գաղութային կայսրության բեկորները միջազգային հարաբերությունների երկբևեռ համակարգում Ակնհայտ էր, որ 60-ականներին ստեղծված իրադրության պարագայում Ֆրանսիայի կողմից իր երբեմնի աշխարհաքաղաքական դիրքերի վերականգնման միակ ուղությունը մնում էր աֆրիկյանը. Լատինական Ամերիկայի գաղութները այլևս ամերիկյան վերահսկողության տակ էին, ասիականը ճապոնական, հետո հայտնվեցին նաև խորհրդա-ամերիկյան մրցակցության ներքո, իսկ մերձավորարևելյանը բրիտանական, որից հետո նորից խորհրդա-ամերիկյան մրցակցության ներքո Գործնականում 60-70- ականներին նոր առաջացած աշխարհաքաղաքական

սուբյեկտների գործնության շրջանակներում Ֆրանսիան սկսեց ձևավորել կայուն ֆրանսիական այսպես կոչված ինքնավերարտադրող «քաղաքական հոսքագիծն Բաղաքական վերահսկողությունը իրականացվում էր նախկին գաղութային երկներում նոր իշխանությունների ձևավորմամբ և տվյալ երկրների քաղաքական էլիտայի ֆրանսիական բուհերում ուսումնառության ձևով Այլ կերպ ասած, նորաթուխ աֆրիկյան քաղաքական էլիտայից ստեղծվում էր ֆրանկաֆոն հանրության շերտերի Շուտով, տնտեսական առումով նախկին գաղութները, որոնք արդեն իսկ անկախ էին, սկսեցին ներգրավվել ֆրանսիական տնտեսության համակարգում, և նախկինում տվյալ երկրների ռեսուրսների արտահանման փոխարեն, ֆրանսիական տնտեսությունը ածանցյալ ձևով սկսեց օգտագործել հումքային և աշխատանքային կապիտալի շուկաների Ֆրանսիայի հետ այդ երկրների տնտեսական փոխկապակցվածության կարևոր գործոն դարձավ «աֆրիկյան ֆրանկը»: Տվյալ արժույթը անմիջականորեն կապված էր ֆրանսիական ֆրանկի, իսկ հետ նաև եվրոյի փոխարժեքի հետ: Բաղաքական առումով տվյալ երկրների վերահսկողությունը իրականացվում էր դիվանագիտական և ռազմական ներկայացուցչությունների միջոցով, աֆրիկյան տարածաշրջանում ֆրանսիական հետախուզական ծառայությունների ակտիվ գործունեության շնորհիվ: Այսպիսով Ֆրանսիան հետպատերազմական աշխարհակարգում հաջողվեց ոչ միայն պահպանել ու վերահսկել երբեմնի իր լայնածավալ գաղութային կայսրության աֆրիկյան հատվածի մեծ մասը, այլև ամրապնդել իր միջազգային դիրքերը դառնալով միջազգային հարաբերությունների երկբևեռ համակարգի ակտիվ և որոշակիորեն ծանրակշիռ անդամ- պետություն:

Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան նախկին գաղութներում 1961-1991 թթ. թեման ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական և գործնական կարևոր նշանակություն և արդիականություն:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները ընդգրկում են 20-րդ դարի 1961-1991 թթ.:

Աշխատանքի շրջանակներում փորձ է արվել ամբողջական և համակարգված կերպով ուսումնասիրել և գիտական շրջանառության մեջ դնել Աֆրիկայում ֆրանսիական քաղաքականության խնդիրների քննարկումը:

Աշխատանքի դրական կողմերից է ատենախոսության աղբյուրագիտական հենքը արխիվային ֆրանսալեզու հարուստ նյութը, մամուլը, նաև ֆրանսալեզու և անգլոլեզու մասնագիտական գրականությունը: Ատենախոսության մեջ ներկայացված հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները, ընդհանուր առմամբ, կարող են օգտագործվել Ֆրանսիայի արդի շրջանի արտաքին քաղաքականությանը նվիրված դասընթացներում, դասագրքերում և ամենատարբեր ուսումնասիրություններում:

Ատենախոսը Ժաննա Հարությունյանը, իր աշխատանքում հանգամանորեն հետազոտել է Ֆրանսիայի աֆրիկյան գաղութների ապագադրությամբ առանձնահատկությունները և նորանկախ պետությունների հետ համագործակցության մեխանիզմների ձևավորումը: Ուսումնասիրության շրջանակներում վերլուծության են ենթարկվել նաև Ֆրանսիայի արտաքին քաղաքական ռազմավարությունը աֆրիկյան նախկին գաղութներում, ապագադրությամբ ժամանակաշրջանից սկսած «ֆրանսիայի փափուկ ուժի» ռազմավարությունը

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ատենախոսությունը, սակայն, զերծ չէ նաև որոշ բացթողումներից և թերություններից:

Նախ պետք է նշել, որ աշխատանքի առանձին հատվածներ շտկման և խմբագրման կարիք ունեն:

1. Մասնավորապես էջ 16-ում հեղինակը նշում է, որ գաղութային նոր կայսրություն ֆրանսիացիները սկսել են ստեղծել հիմնականում 1850 թ. հետո կենտրոնանալով գլխավորապես Աֆրիկայի, Հնդկաչինի թերակղզու և Խաղաղ օվկիանոսի հարավային տարածաշրջանի վրա: Կարծում ենք, որ հեղինակը պետք է նշեր նաև ֆրանսիական աշխարհաքաղաքական նկրտումների մասին նաև

Մերձավոր Արևելքում մասնավորապես արաբական աշխարհում հիմք ընդունելով «Մայքս-Պիկոյի» համաձայնագիրը, որի դրույթները անգլո-ֆրանսիական մասով ամրագրվեցին միջազգային հարաբերությունների մանդատային համակարգով Պետք է հաշվի առնել, որ արաբական աշխարհի մի հատվածը Մադրիբը, ներառում է նաև Հյուսիսային Աֆրիկան, որի հակազդության պայքարը ըստ էության սույն աշխատանքի կենտրոնական խնդիրներից է:

2. Էջ 19-ի վերջում հեղինակը նշում է, որ երկրորդ համաշխարհային պատերազմի վերջում և հատկապես պատերազմից հետո ժողովուրդների ինքնորոշման գաղափարն արժանացավ առանձնահատուկ ուշադրության Հարկ ենք համարում հիշեցնել, որ դեռևս 1941 թ. օգոստոսին Նյուֆաունդլենդ կղզում ընդունվեց «Ատլանտյան խարտիան», որով հետապատերազմական աշխարհակարգին առնչվող մի շարք հարցերի հետ միասին ամրագրվում էր նաև ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը Սույն Խարտիայով ուրվագծվեց նաև ապագա ՄԱԿ-ի մասին գաղափարը

3. Էջ 22-ի սկզբում հեղինակը նշում է, որ ֆրանսիական գաղութարարների դեմ մղված պայքարին ուշադրություն էր դարձնում 1945 թ. հիմնադրված արաբական անկախ երկրները միավորող միջպետական տարածաշրջանային կազմակերպությունը Արաբական պետությունների լիգան: Պետք է արձանագրենք, որ Լիգայի ստեղծման պահին կազմակերպության անդամ-արաբական մի շարք երկրներ ունեին ընդամենը ֆորմալ անկախություն, այսինքն անկախ չէին. մասնավորապես Եգիպտոսն իր անկախությունը նվաճեց միայն 1952 թ. «Ազատ սպաների» հեղափոխությունից հետո, Անդրհորդանանը 1946 թ., Սիրիան 1946 թ. ֆրանսիական զորքերը դուրս բերելուց հետո: Միևնույն ժամանակ կարևոր է նշել, որ Լիգան ստեղծվել էր Մեծ Բրիտանիայի նախաձեռնությամբ, որի քողարկված նպատկն էր սեփական ազդեցության պահպանումը արաբական աշխարհում, հետևաբար հեղինակը պետք է նշեր, որ ֆրանսիայի դեմ հիմնական և միջնորդավորված պայքարը մղվում էր հենց Անգլիայի կողմից:

4. Սույն աշխատանքի էջ 24-26-ը հեղինակը նվիրել է Հնդկաչինում ֆրանսիական իշխանությունների դեմ մղված պայքարի քննարկմանը: Կարծում ենք, որ գիտական առումով նպատակահարմար չէ այդ ծավալով անդրադառնալ տվյալ հարցին, մանավանդ, երբ հեղինակի ուշադրության կենտրոնը Աֆրիկան է: Այլապես նույն տրամաբանությամբ կարելի էր նաև անդրադառնալ արաբական Մադրիբում այսինքն Արաբական թերակղզում ֆրանսիական գաղութների խնդրին:

5. Էջ 72-ի առաջին պարբերությամբ հեղինակը նշում է, որ Աֆրիկայի դերի բարձրացմանը նպաստեցին մի քանի գործոններ, այնուհետև թվարկում այդ գործոնները: Մակայն թվարկված գործոնների շարքում, կարծում ենք արդարացի կլիներ, եթե Ժաննա Հարությունյան նր նշեր նաև 1963 թ. Գանայի նախագահ Քվամե Նքրումայի նախաձեռնությամբ ստեղծված Աֆրիկյան պետությունների կազմակերպությունը, որի հիման վրա 2020 թ. Աֆրիկյան միություն կազմակերպությունը, և որտեղ 2010 թ. դիտորդի կարգավիճակ ստացավ նաև Հայաստանի Հանրապետությունը: Աֆրիկյան պետությունների կազմակերպությունը կարևորագույն դերակատարություն է ունեցել աֆրիկյան պետությունների գաղութատիրության դեմ պայքարի գործում: Աֆրիկյան պետությունների ինքնիշխանության և տարածքային ամբողջականության մասին դրույթները ամրագրված են տվյալ կազմակերպության նպատակներում և սկզբունքներում Այս կազմակերպությանը հեղինակը անդրադառնում է միայն 73-րդ էջին, սակայն հպանցիկ:

6. Էջ 74, 75-ում հեղինակը մի քանի անգամ նշում է «մահմեդական» եզրույթը, որը արևելագիտության տեսակետից տևական ժամանակ է, ինչ կիրառելի չէ. օգտագործվում է «Իսլամադավան կամ մուսուլման» եզրույթների

7. Էջ 78-ի վերջին պարբերությունում հեղինակը գրում է, որ 1974 թ. Ալժիրի նախագահ Բոմանդենը հատարարեց, որ....., հավանաբար հեղինակը նկատի ունի Հուարի Բումեդիենին

8. Սույն աշխատանքը շատ ավելի շահեկան կլիներ, եթե հեղինակն իր առջև խնդիր դներ գիտական քննարկման ենթարկել վերը նշվածից մեկ կամ երկու աֆրիկյան երկրների նկատմամբ

Ֆրանսիայի քաղաքականությունը Սույն լայնածավալ թեման բավականին դժվար է սպառնիչ կերպով տեղավորել 150160 էջերի շրջանակում

9. Աշխատանքում հանդիպում են վրիպակներ, բացթողումներ, ուղագրական սխալներ

10. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը աշխատանքի Եզրակացություն բաժնում մեկերկու պարբերությամբ նշեր նաև Ֆրանսիայի աֆրիկյան գաղութներում ֆրանս-չինական օր օրի աճող մրցակցության մասին, ինչպես նաև ոչ միայն դեպի Ֆրանսիա այլև ողջ Արևմտյան Եվրոպա աֆրիկյան ներգաղթի մասին

Նշված թերությունները սակայն չեն սովերում աշխատանքի կարևոր նշանակությունը Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով Հեղինակը հանդես է բերել ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ունակություն, իսկ ատենախոսության հիմքում ընկած արխիվային և փաստական նյութը մեծապես նպաստել է հետազոտվող հիմնախնդիրների բազմակողմանի ուսումնասիրությանը

Ատենախոսության մեջ քննարկվող հիմնախնդիրներն ու դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած թվով 9 գիտական հոդվածներում, որոնց ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում Սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը

Որոշեցին՝ Ժաննա Հարությունի Հարությունյանի «Ֆրանսիայի քաղաքականությունը աֆրիկյան նախկին գաղութներում 1961-1991 թթ.» թեմայով ատենախոսությունը լիովին բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչի ժ.պ., ք.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյան

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային քաղաքականության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչի ժ.պ., ք.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյան

ք.գ.թ., դոցենտ Ռ.Գ.Էլամիրյանի ստորագրությունը

հաստատում եմ՝

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական քարտուղար, ք.գ.թ. Ռ.Ս.Կասարբովա

